

Թուլացնում են և ապականում՝ և՛ արտօնեալ բնակչու-
թիւնը և այն մասը, որ շատ անտանելի է համարւում:

Հարցը կիսատ-պռատ վճռելու մասին էլ չի կարող
այստեղ խօսք լինել:

Հարկաւոր է գորդեան հանգոյցը միանգամից և վերջ-
նականապէս կտրել: Ռուսական կառավարութեան եղա-
նակի մէջ ոչինչ բան չպէտք է մնայ, որը այլազգիներին
և այլադաւաններին յիշեցնել կարողանար, թէ պետու-
թիւնը նոցա նկատմամբ անհաւասար վերաբերմունք է
ցոյց տուել: Պետութեան առաջ ընդ որ հպատակների տըն-
տեսական և անձնական պարտականութեանց նոյնութիւնը
տրհրածելութիւն է առաջ բերում, որ նա իրաւունք-
ների հաւասարութիւն էլ ունենան:

Շարունակելով այլազգիների և այլադաւանների իրա-
ւունքների սահմանափակումը պահպանել՝ Ռուսաստանը
իբրև հաւասար իրաւունքներ ունեցող անդամ, երբէք չի
մտնի քաղաքակիրթ ժողովուրդների ընտանիքի մէջ:

Թարգմ. Ա. Եւոն վարդ.

ՄԱՄԻԿՈՆԵԱՆՅ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ

Ա. Մամիկոնեանց նշանակութիւնը եւ պատմութեան
աղբիւրները.

Յ ա լ ե լ ու ա ծ

Մենք ցոյց տուինք* թէ ինչպէս ժամանակակից պատ-
մական անցքերն ու անձերը, յատկապէս Մամիկոնեանցը՝
անդրադարձել են մեր ազգային ժողովրդական գիւցազ-
ներգութեան մէջ: Մեր զբաղմանց ընթացքում հետզհետէ

* Արարատ 1906. ապրիլ, էջ 334—342:

ձեռք բերած նորանոր ապացոյցներով կարող ենք այժմ առաւել ևս ոյժ տալ այդ տեսութեան: Ոմանք դժուարանում են ընդունել, որ այդքան հեռւոր պատմական անցքերի ու անձերի հետքերը կարող էին ցարդ ժողովրդի մէջ պահուել: Սակայն այս մի շատ թոյլ և անհիմն առարկութիւն է: Յունաց պատմութիւնը, ընդհարումը Փոքր-Ասիացոց հետ, առ հասարակ նոցա զինուորական կեանքը արտացոլում է Իլիականի և ընտանեկան կեանքն ու յարաբերութիւնները դրացիների հետ Ոդիսականի մէջ, որտեղ գործում են խառն աստուածութեանց հետ և դիւցազներ: Շահնամէի մէջ էլ ցոլում է Իրանի անցեալը իւր դիւցազներով՝ և դարաւոր կռիւները Թուրանի դէմ, գերմանացոց Նիբելունգների երգի մէջ նոցա ներքին կեանքն և կռիւները Հանների և այլոց դէմ ևլն: Այս բոլորը գիտնականները բազմաթիւ ուսումնասիրութիւններով այնպէս ապացուցել են, որ այդ մասին տարակոյս չկանք ամենեւին չէ կարող: Արդ այս բոլոր երկերը կատարուած իրողութեանց ժամանակից առ առաւելն ե—է դար ոչ են գրի առնուած, սակայն և այնպէս անուրանալի է, որ այդ դիւցազներգութիւնները բովանդակում են ժողովուրդների ոչ միայն իսկական կեանքը, այլ և պատմական անցքեր և անձեր:

Դեռ մեր ժամանակ, անցեալ դարու վերջի կէսում, փինները նոր հետզհետէ հաւաքեցին իւրեանց նշանաւոր ազգային դիւցազներգութիւնը, Կալլիվալան,—

Արդ ինչու մեզանում ևս նոյնը չպիտի լինէր. հասարակ ժողովուրդը ամեն տեղ նոյն է, նա է անցեալի աւանդութեանց գլխաւոր անդիր պահապանը, որ կառչում է դարերով ինչպէս իւր հող ու ջրին այնպէս էլ անցեալին և աւանդութեանց. միթէ մեծ տարբերութիւն կայ Քսենոֆոնի 401 թուի Ն. Ք. նկարագրած հայ գիւղի և գիւղացու, նորա կեանքի և այսօրուան Ալաշկերտի կամ Ապարանի հայի մէջ: ԺՆ. դարում Լուսաւորչի և Տրդատի մասին գերմանացի Հանս Շիլդերբրգէրի¹ գրի առած աւան-

¹ Հանդէս Գրակ. և Պատմ. Գ. գերք էջ 153. Մոսկ. 1890.

գութիւնը համարեա բառացի պատմում են մեր պառաւ-
ները, և ես լսել եմ իմ տատ Խաթունից և ուրիշ «մամա-
ներից»։ Վերջապէս մեր Մ. Խորենացին է. կամ թէկուզ
ե. դարում Հայոց այսպէս կոչուած Հայկազանց շրջանը
և Արշակունեաց սկզբնաւորութեան առաջին դարերը, այ-
նուհետեւ էլ շատ պատմական անցքեր, հազար տարուց
աւելի շրջանի պատմութիւնը չէ քաղում զրոյցներից,
առասպելներից, երգերից և վէպերից, որ կարելի է հա-
մոզուել կարգաւով և Մ. Աբեղեանի գեղեցիկ ուսումնասի-
րութիւնը¹։ Այս այնպիսի ապացուցուած ճշմարտութիւններ
են, որ աւելորդ է նոյն իսկ այլ ևս երկար կանգ առնել
այդ մասին։ Ընթերցողը մեր իսկոյն և եթ ասելիքներից
էլ կը համոզուի, որ այդքան պատմական անունների թէ
ազգային և թէ օտար և թէ տեղագրական նոյնութիւն-
ները և նմանութիւնները պատահական լինել չեն կարող,
որովհետեւ հնարաւորութեան սահմանից դուրս է այդ։—

Ժողովուրդը պատմական ժամանակագրութիւն չգի-
տէ, ուստի դարերով իրարից հեռու անձինք միմեանց
ժամանակակից է դարձնում, երբեմն իւրը, մերձաւորն
աւելի պայծառ է ցոլացնում, հեռաւորը հասկանալի է
կացուցանում մերձաւորով, որոշ անախորժ անցքեր և
վայրագութիւններ լռելեայն կամ մի փոքրիկ ակնարկով
հասկացնում և կամ ըստ իւր հասկացողութեան և եր-
բեմն սքանչելի կերպով և գեղարուեստօրէն բարեփոխում
և կամ դուրս է քցում, բայց և այնպէս պատմական
խոշոր անցքերը և ընթացքը ընդհանրապէս ճշտութեամբ
արտայայտում է։—

Դեռ նախահայկական՝ խաղբեան կամ ուրարդական
շրջանի դարաւոր կռիւները հաբաւի՝ Ասորեստանի դէմ
արտայայտում է Հայկի և Բելի, Արամի և Նինոսի ու
Բարշամի, Արայի ու Շամիրամի, Վահագնի ու Բարշամի
առասպելներում։ Հայաստանի հարաւը իբրեւ սահմանա-

1 Մ. Աբեղեան «Հայ ժողովրդական Առասպելները Մ.
Խորենացու Հայոց պատմութեան մէջ», Վաղարշապատ 1901։

կից Ասորեստանի հնագոյն ժամանակներից լի է եղել ասորիներով¹, այսօր էլ համարեա նոյն է, մանաւանդ ժողովրդական դիւցազներգութեան գործողութեան վայրերը, Աղձնիք և մասամբ Վասպուրականի հարաւը։ Այն էլ կայ որ մեր նախարարութեանց մէջ կան բաւական թուով օտարներ, արեւելքից և հարաւից եկած, որովհետեւ արեւմուտքից արդէն իրենք հայերն են եկուորները, իսկ դէպի հիւսիս մղել են իրենց ոտիս բնիկներին՝ խալդերին։

Արդ ժողովրդական դիւցազներգութեան նախնական և հնագոյն մասը այդ է ներկայացնում։ Ութներորդ դարի վերջում նախ քան Քրիստոս, ուրեմն հաւանօրէն հայերի հայաստան դալուց առաջ կամ գուցէ նոյն ժամանակներում Ասորեստանի Սենեքերիմ թագաւորի որդիքը սպանելով իրենց հօրը փախչում են հայաստան։

«Եւ դարձաւ Սենեքերիմ արքայ Ասորեստանեայց և բնակեաց ի Նինուէ։ Եւ եղև մինչդեռ երկիր պազանէր ի տան Նեսրաքայ աստուծոյ (փոփոխակ՝ Եսրաքայ աստուծոց) իւրում, Աղրամելէք և Սարասար որդիք նորա հարին զնա սրով, և ինքեանք զերծան յերկիրն արարադայ»²։ Արդ նոյն աւանդութիւնը կայ և Հայոց պատմութեան մէջ։ Մ. Խորենացին ասում է. «Որովհետեւ ութսուն տարի, աւելի կամ պակաս, Նաբուգոդոնոսորի թագաւորութիւնից առաջ, այս Սենեքերիմը Ասորեստանի թագաւոր էր, որ Երուսաղէմը պաշարեց հրէից առաջնորդ Եղեկիայի ժամանակ, որին սպանելով նորա Ագրամել և Սանասար³ որդիքը, փախան եկան մեր մօտ։ Որոնցից մինին, այսինքն

1 Հմմ. Հիւբշման die Altarm. Ortsnamen. Բ. հատուած էջ 235։

2 Դ Թագ. ԺԺ, 36—37։ Ծանօթութեան մէջ Զօհրապեանը դիտում է «ի լուս.» ի վերայ՝ արարադայ, Եւսանակի Սիմ, այսինքն Սիմաֆու դեհ, հայոց»։

3 Մատթէոս Ուռհայեցին կոչում է ըստ Ս. Գրքի Սարասար, որից ծագում են Արծրունիք «Ընդ ժամանակս Վասիլին Յունաց թագաւորին, . . . և Սենեքերիմայ որդւոյ Ապուսահլի, որդւոյ Աշոտոյ որդւոյ Դերենկանն, որդւոյ Գագկայ Արծրունեաց յազգէն Սարասարայ»։ ժամանակագրութիւն էջ 34. Վաղարշապատ 1898։—

Սանասարին, մեր քաջ նախնին՝ Սկայորդին բնակեցնում է նոյն Ասորեստանի սահմանների մօտերը. և սորա սեփականը լցրին Սիմ կոչուած լեռը: Իսկ նոցանից պերճերն ու գլխաւորները յետոյ մտերմութիւն և վաստակ ցոյց տալով մեր թագաւորներին, արժանացան այն կողմերի բզեչխութիւնն ստանալու: Իսկ Արգամոզանը (վերեւում՝ Ադրամելիք) նոյն կողմի հարաւ արեւելքումն է բնակւում. սորանից են եղել, ասում է պատմագիրը, Արծրունիները և Գնունիները¹: Յետոյ Վաղարշակը «Շարաշանին, Սանասարի տանից, հաստատուե՞լ է մեծ բզեչխ և հարաւ արեւմուտքի կուսակալ, Ասորեստանի սահմանների եզերքին, Տիգրիս գետի ափին, գաւառներ պարգեւելով նորան Արձնը իւր շրջակայքով, և Տաւրոս լեռը, որտեղ Սիմն է, և ամբողջ Կղեսուրը»²: Արծրունիք շատ պատուաւոր և բարձր դիրք ունէին և իրենց Սանասարից էին համարում. այս երեւում է Ե. դարի առաջին քառորդում Շաւառայ Արծրունին հայոց Շապուհ պարսիկ թագաւորին մականախաղի ժամանակ տուած պատասխանից, երբ սա նորան սպառնում էր ասելով՝ «ճանաչիր բեզ», իսկ նա պատասխանելով ասում է. «Այո, ճանաչում եմ, որ և ես արքայորդի եմ, Սանասարի սերունդից. և իրաւունք ունիմ քո եղբայրների հետ արքայի բարձր համբուրելու»³:

Արդ մինչև ցարդ եղած ժողովրդական վէպի վեց հրատարակութեանց 10-ից աւելի փոփոխակներով վաւրեանտներով երկուսն ունեն «Սենեքերիմ թագաւոր»⁴ կամ «Սենեքերիմ կռապաշտ թագաւոր»⁵ միւսներն արդէն, որոնք այդ մասին յիշատակում են միայն կռապաշտ⁶

1 Խոր. Ա. ԻԳ, 48—49: Թովմայ Արծրունին (Ա, ա, 8) ունի Ադրամելիք և Սանասար, բայց չունի Արգամոզան անունը:

2 Խոր. Բ, Ը, 80:

3 Խոր. Գ, ԾԵ, 250:

4 Գար. Սար. 13, 14, 15:

5 Ս. Հայկունի. Էմինեան Ազգագրական ժողովածու հատոր Բ. էջ 3. Մոսկուա—Վաղարշապատ 1901:—

6 Ս. Հայկունի. Էմինեան Ազգ. ժողով. հատոր Գ. Ա. էջ 404. Մոսկուա—Վաղարշապատ 1902:—Թլուատ Դաւիթ և Սասնայ ծռեր Արտաշէս Արէղեան. Սառնայ ծռեր Ա. էջ 48. Թեֆլիս 1902:

Թագաւոր են ասում առանց անունը տալու, կամ ըստ ինքեան լռելեայն հասկացում է, որովհետեւ կոչւում է «Բաղդղու խալիֆայ»¹։ Ժողովրդական վէպը Սենեքեւ յիմի մասին պատմում է.

«Սենեքերիմ կռապաշտ էր, տղեկներ աստուածապաշտ։ Խօշուն էրեց ու գնաց էր ուսողէմայ վրէն կռիւ։ Եօթ տարի քաղքի բոլոր խօշուն չափեց նստաւ։ Թանգուտեն ընկաւ քաղքի մէջ. Թագաւորն, ուր վազիր... ընկան քաղքի մէջ... ու սկսեցին խեր ու խերիաթ էնել ու պատարագ էնել. պատարագ որ էրեցին պրծան, հրեշտակներ սրով թրով իջան Սենեքերիմի ասքարի մէջ, ու ջարդեցին, ու սպանեցին ու կոտորեցին։ Մնաց Սենեքերիմ մինակ ու հեծաւ մեծ դեէն ու փախաւ։ Փախաւ ու ճամբախ ըսեց.— Ով ջոջ կուռք, Ասլիմելիք քեզի մատաղ»²... Արդ այս նկարագիրը համարեա թէ նոյնն է, ինչ որ Դ. Թագաւորութեանց ԺԸ և ԺԹ գլուխների, մանաւանդ վերջին գլխի վերջին տների բովանդակութիւնը։ Այս ի նկատի առնելով կարող ենք համարձակ ասել, որ Խորենացին կամ իւր աղբիւրը Ս. Գրքից աւելի օգտուել է Ժողովրդական աղբիւրներից և գիւցազներգութիւններից, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք այլ աւանդութիւններ ևս, որ կան Արծրունեաց և այլոց մասին այլ և այն յատուկ աշխարհագրական անուանց ծագման բացատրութիւնները, որ տալիս է Խորենացին իւր Ա. գլքում և որոնց համանմանները գտնում ենք աղգային վէպի և այլ գիւցազներգութեանց³ մէջ։ Այնպէս որ համարձակ

1 Սրուանձտեան Պատկանեան Ա. 1:

2 Գար. Սար. Ա. 13—14:

3 «Իմ խրօխպօր գերեզման, ասում է Մհերը, գեոյ Բաղդատայ քեաղաքն. ինչ Բաղդատար Պընձէ քեաղքէն էկիր էր, կեացիր էր էնտեղ մեռիր էր, քեաղաք շինիր էր, անուն գրիր էր Բաղդատ, զինք Բաղդատար էր» Գար. Սար. էջ 143: Տես և «Ագռաւու քեար» էջ 150:—Ռէսի աղջիկը Դաւթին «Բեանդ էրաւ, անունը մնաց Բեանդիւ մահին, առաջ Արճէշու երկիր կ'ասին»: Գար. Սար. 129:—Սասունը երեք տեսակ է բացատրւում 1. «Քարէ սան սուն էք զարկէ, ըստրա անուն տ'եղնի Սանասուն, Սասուն»: Սրուանձտ.— Պատկ. Ա. էջ 5:—2. «Զեր բերդի անուն սուն վըր»

կարելի է պնդել, թէ Խորենացին իւր պատմութեան մանաւանդ առաջին գրքի աշխարհագրական անուանց համանուն իշխանական անձանց անուններով բացատրութիւններն աւելի շատ վէպերից է առել, և շատ քիչ մասը իրենն է, ինչպէս Բագրատունեաց հրէական ծագումն անունների նմանութեամբ զոռով բացատրելը¹։

Բաղդատ քաղաքի այստեղ հանդէս գալը կարելի էր գէթ հեռաւոր կերպով հասկանալի համարել, ի նկատի առնելով հին Բաբելոնի և Ասորեստանի փոխադարձ տիրապետութիւնը։ Բայց միևնոյն ժամանակ չպէտք է մոռանալ, որ Դարեհի ժամանակ հայեր կային նորա բանա-

սան—Սասուն» Գար. Սար. Ա. 19:—3. «Էս տուն չի սասումի, էնու անուն կոչուաւ Սասում»։ Գար. Սար. Բ. 68:—«Ըզմ, քեանի սասում (ցասում) բերդ մի... բերդը անուն մնաց Սասում» Ս. Հայկունի էմինեան Աղգազը. ժողով. հատոր Բ. 1, 10: «Էս սասում ա, մնաց... էդ տան անուն Սասում»։ Ս. Հայկ. էմին. Աղգ. ժողով. Հատոր Գ. Ա. 408: Քեռի թորոսը «Տեսաւ մեծ մեծ քարեր են պերէ, առաւ, «Էս սասուն ա էս ինչ քարէր էք գրէ», սասուն քարեր ա, ընդու համար մնաց Սասուն էդ քաղաքի անունը» Արտ. Արեղեան Սասնայ ծռեր Ա, 48—49. Թիֆլիս 1902. Սասուն քարեր՝ ծանօթութեան մէջ մեկնուած է «Ահագին, սարսափելի»։—

Ստուգաբանութեան կողմից շատ աւելի հարուստ է à la Խորենացի և Յովհ. Մամիկոնեան Ս. Հայկունու 1896 թուին Ս. Էջմիածնի տպարանում հրատարակուած «Մօքոս» ժողովրդական վէպը, որ ինչպէս Ն. Քարամեանց նկատել և մեզ յիշեցնում է Լուսաւորչի գործերը։ Արարատ 1896:

1 «Եւ ինձ թուի, թէ որ այժմի կոչին Բագրատունիք Բագարատ՝ Բագադիա է դա, և Ասուդ՝ Ասոս. դոյնպէս և Վաղարիա՝ Վարազ, որպէս Շամբատ՝ Սմբատ»։ Խոր Բ, կգ, 142: Արդ Խորենացին ինքը յիշում է Բագրատ և Սմբատ Բագրատունիներ, իսկ Վարազ անունով ունի միայն Վարազդատ, բայց և ոչ մի Բագրատունի, սակայն Ասոս անունով ոչ ոքի չի յիշում։ Վարազ անունով նախարարներ Գ. և Ե. դարուց յիշում են Փ. Բուզանդացին և Ղ. Փարպեցին ու եղիշէն, բայց ոչ մինն էլ Բագրատունի չեն. մինչդեռ 2. դարու վերջերից յիշում է ի միջի այլ Վարազ մակդիր կրողների Վարազսիքոց Բագրատունի, Սմբատ մարզպանի որդին, որ 607/8 թուականից առաջ Պարսից Խոսրով արքայի մատուցած էր. Տես Սեբէոս Գ. ժէ, 63—64: Եթեքերոյ դարու քառասնական թուականների վերջերին յիշում է դարձեալ Վարազ Սահակ Բագրատունու որդի Սմբատ, Դարեւնից տէր. Սեբէոս Գ. լք, 117: Աշոտ անունը սակայն Գ. և Ե. դարում ամենեւին չէ յիշում և ոչ մի մատենագիր և ոչ իսկ 2. -ի առաջին կիսում։ Առաջին անգամ յիշում է «Պապ Բագրատունի որդի Աշոտոյ ասպետի» Սեբ. Գ. ժա, 56: Այս Պապը

կում իբրև նշանաւոր զօրավարներ ինչպէս Դադարոսէսը¹, իսկ Անդիտի որդի Արախը² Բաբելոնում ապստամբել է հրատարակելով իրեն նաբունետի որդի նաբուգոդոնոսոր և թագաւոր Բաբելոնի³, որ երկար գիմադրութիւնից յետոյ գերի է ընկնում: Ահա թէ ինչու Բաղդասարի գերեզմանը Բաղդասաւումն է: Բաղդատը հին Բաբելոնի տեղ ծաղկեց Արաքսոց ժամանակ. Ը. դարում իբրև Աբասեանց մայրաքաղաք, որտեղ խալիֆաները մինչև ԺԳ. դարու կէսը նստում էին, որոնք Հայաստանի գերիշխաններն էին, որտեղ բազմաթիւ հայ իշխաններ մեռել են ու թաղուել:—Նինուէն էլ իսկապէս հանգէս է գալիս, սակայն իւր նորագոյն Մուսուլ ձեով, որից Մալամեիք, որ Ժողովուրդը շփոթել է անունների նմանութեամբ, և Մարամեիք է դարձրել, իսկ Մալը ցարդ ևս մեր Ժողովրդի մէջ Եգիպտոսն է նշանակում. բայց այս սոսկ անունաց շփոթութիւն չպէտք է համարել, որովհետեւ ԺԳ. դարում Սալահատինը⁴ և իւր յաջորդները Եգիպտոսի ուրեմն Մարայ տէր լինելով հասան մինչև Եփրատ, նորա սերունդը էյիւբեանք տիրում էին և Միջագետքին (որի մայրաքաղաքը Մուսուլն է), Դամասկոսին Հալէքին⁵ և այլերկրների: Սենեքերիմի որդիքը Աբամեիք և Սանասար⁶ սակայն խաչապաշտ հայ մօրից են: Սորա պատճառը մենք բացատրել ենք անցեալ անգամ, որ քրիստոնեայ և հայ

յիշուում է Պարսից բաժնում 591-ից յետոյ. Աշոտն ուրեմն շատ շատ 2. դարու առաջին քառորդում կ'ապրէր: Խորենացու ժամանակի համար նշանակութիւն ունեցող այս հանգամանքի վրայ ցարդ ուշք չէ դարձուած:

1 В. Θ. Коршъ Всеобщая Исторія Литературы. томъ I. 4. Գ. Զալէմանի Պարսից կամ Իրանցոց գրականութիւնը. տախտակ II. § 7. էջ 164. Ս. Պ. 1880:

2 Վ. Թ. Կորշ I, տախտակ III, § 13. էջ 166 տախտակ IV, § էջ 167:—

3 Հանս Շիլլերերգէրի ատելով «Բաբելոնն էլ երկար ժամանակ հայերին է պատկանել»: Հանգէս Գրականական էջ 152. Գրք Գ. 1890. Մոսկուա:

4 Սաէնլի—Լէնպուլ § 28. էջ 58—61:

5 Մ. Աբեղեան, Գ. Ե. 54—56. Բ. Խալաթեան 61, 62, 73 և այլ վարիանտներ:

6 Արուանձաւ. ու Պատկ. Ա. էջ 1 և ին:—Սանասար և Ասլամեիք Գար. Սար. 13 և ին:—Սանասար և Բաղդասար Գար. Սար. 61—63: Ս. Հայկ. Էմին. Ազգ. Ժողով. Գ. 403 և ին. Հատոր Բ. 5: Արտ. Աբեղ. 48: Խորենացին ևս ունի մի տարբեր անուն ձև Աբամեիքի, որ է Արգամոդան: Ս. ԻԳ. 48:

տիկիներն շատ անգամ, մանաւանդ Բուղայի ժամանակ գերի են տարուել: Բայց կայ և մի ընդհանուր ժողովրդական հոգեբանական հիմք: Հասարակ ժողովուրդը չէ կարողանում հաշտուել, որ իւր դարաւոր իշխանները կարող են օտար լինել, սակայն այդ երբեմն ակնյայտնի իրողութեանց հետ հաշտուում են նորեկ իշխաններին ազգայնացնելով, որ շատ անգամ էլ հիմք ունի. այսպէս դարերով պարսիկների իշխող մարերի համար անհասկանալի էր ցայն իրենց հպատակ պարսիկներին հպատակուել, բայց ակամայից պիտի հաշտուէին այդ դուրսթեանը համոզուելով թէ Կիւրոսը իրենց Աթաշակի թոռն է, կամ ինչպէս յետոյ Պարսիկները կարծում են թէ Ալեքսանդր Մեծը ծագմամբ պարսիկ է: Առհասարակ մի նոր տիրող իշխան կամ հարստութիւն ինքն ևս ճգնում է կապել իւր ծագումը նախորդ տիրապետող հարստութեան կամ գոնեա մի արքայական ծագումն ունեցող տոհմի հետ. այսպէս է շատ ազգերի մէջ, այսպէս էին և մեր աւագ նախարարութիւններից շատերը:

Գուցէ այս բոլորից յետոյ լինեն դարձեալ և ուրիշները, որ կարծեն թէ այս գիւցազներգութիւնը ծագած լինի ժողովրդի պատմագրութեան ծանօթութիւնից, բայց այս էլ անհիմն կը լինէր, որովհետեւ գիւցազներգութեան մէջ այնպիսի պատմական անձինք ևս յիշուած են, որ հազիւ թէ մասնագէտների քաջայայտ լինեն, թող թէ հասարակ ժողովրդին. մանաւանդ որ կան գիւցազներգութեան մէջ անուններ, ինչպէս մեր անցեալ յօդուածում ևս տեսանք, որ մեր պատմագիրները չեն էլ յիշում: Եթէ այդ ծագէր պատմագրութեան ծանօթութիւնից, ինչո՞ւ Հայաստանի հեռաւոր վայրերում ևս բնիկ չէ գիւցազներգութիւնը իւր գիւցազներգով: Չէ կարելի ապաքէն ասել թէ մեր պատմագրերը միայն որոշ շրջանի ժողովրդին էին ծանօթ:

Հասկանալի պէտք է լինի ուրեմն ինչու վէպի գանազան փոփոխակները մեծ մասամբ ծագում են գիւցազներգութեան գործողութեանց վայրերից կամ այս տեղից հաղթած ժողովուրդներից. որտեղ վէպը շարունակ թարմացել է և հիւսել է նորանոր անցքեր հների հետ վասպուրականում, մանաւանդ թէ Տարօնում կամ շրջակայքում, ինչպէս որ շուտով կը տեսնենք:—

(Նարուհակելի):